N124-25

# ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԷՆ-ԳՀԾՁԲ-25/75

**ք. Երևան** «23» 10 **2025թ.**

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սերվիս Ստեյշն» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Էդգար Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 442 831 (չորս հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N

4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018695
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝

-----------------------Հ. Նասիբյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սերվիս Ստեյշն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. Շենք 3 բն.9
«ԷՎՈԿԱԲԱՆԿ » ԲԲԸ
Հ/Հ՝ 1660019711410100
ՀՎՀՀ 00241595
Տնօրեն

----------------------Է. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված N 1*
*«23» 10 20[illegible]թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը* |
| 1 | 50111130/3 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ այդ թվում | | | | | |
| | | (see nested table below) | դրամ | 442 831 | 1 | ք.Երևան | |

| Հ/հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ մասերի — 1-րդ մաս — Տոյոտա Կորոլլա մակնիշի ա/մ /1 հատ/ — Գնացուցակ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **1.SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3645.6 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 3645.6 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 3645.6 |
| 4 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 7 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1093.7 |
| 8 | Օդի զտիչի փոխարինում | 2187.4 |
| 9 | Բենզամղիչի փոխարինում | 10936.9 |
| 10 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10936.9 |
| 11 | Օդորակիչի ֆիլտրերի փոխարինում | 2916.5 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 12 | Ռադիատորի վերանորոգում | 14582.5 |
| 13 | Թերմոստատի փոխարինում | 6562.1 |
| 14 | Ջրի պոմպի փոխարինում | 10936.9 |
| 15 | Ջրի պոմպի վերանորոգում | 3645.6 |
| | **4. Կախոց** | |
| 16 | Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում | 8749.5 |
| 17 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 18 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | 19 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 20 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 10936.9 | | | | | |
| | | 21 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 5833.0 | | | | | |
| | | 22 | Գնդե հոդակապերի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | 23 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 14582.5 | | | | | |
| | | 24 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | 25 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 26 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | **5. Արգելակային համակարգ** | | | | | | |
| | | 27 | Արգելակային փողրակի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | 28 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 29 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 30 | Հետևի կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 31 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | 32 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | | **6. Էլեկտրասարքավորում** | | | | | | |
| | | 33 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 18228.2 | | | | | |
| | | 34 | Գեներատորի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | 35 | Գեներատորի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | 36 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | 37 | Մեկնարկիչի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | 38 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 39 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 40 | Վառոցքի մոմերի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | | **7. Այլ ծառայություններ** | | | | | | |
| | | 41 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ – ի համար | 5833.0 | | | | | |
| | | 42 | Անիվի հանում և տեղադրում | 1093.7 | | | | | |
| | | 43 | Անվադողի վերանորոգում | 1458.3 | | | | | |
| | | 44 | Անիվի վուլկանացում | 1458.3 | | | | | |
| | | 45 | Անիվի բալանսավորում | 1093.7 | | | | | |
| | | 46 | Անիվների դիրքի կարգավորում | 5833.0 | | | | | |
| | | | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | | | | | |
| | | | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | |
| | | 47 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 2551.9 | | | | | |
| | | 48 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 4228.9 | | | | | |
| | | 49 | Յուղի զտիչ | 2551.9 | | | | | |
| | | 50 | Վառոցքի մոմ | 5103.9 | | | | | |
| | | 51 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 61975.8 | | | | | |
| | | 52 | Վառելանյութի զտիչ | 32810.7 | | | | | |
| | | | **2. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | |
| | | 53 | Ռադիատոր | 54684.5 | | | | | |
| | | 54 | Թերմոստատ | 18228.2 | | | | | |
| | | 55 | Ջրի պոմպ | 34998.1 | | | | | |
| | | 56 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2187.4 | | | | | |

| | | |
|---|---|---|
| | **3. Կախոց** | |
| 57 | Շարժիչի մեղմիչ | 14582.5 |
| 58 | Հետևի հարվածամեղմիչ | 40102.0 |
| 59 | Հարվածամեղմիչի թասակ | 18228.2 |
| 60 | լծակի վռան | 8749.5 |
| 61 | կայունարարի կանգնակ | 8749.5 |
| 62 | ձախ կամ աջ հոդակապ | 54684.5 |
| 63 | ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 14582.5 |
| 64 | անվակունդի առանցքակալ | 30623.3 |
| 65 | անվակունդ | 40102.0 |
| 66 | Աջ կամ ձախ ձգան | 13124.3 |
| 67 | ղեկային ծայրակալ | 8749.5 |
| 68 | Գնդե հոդակապ | 23332.1 |
| 69 | Առջևի կայունարար | 52497.2 |
| 70 | Առջևի կայունարարի վռան | 3645.6 |
| 71 | Հետևի կայունարարի վռան | 2916.5 |
| | **4. Արգելակային համակարգ** | |
| 72 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 25519.5 |
| 73 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 20415.6 |
| 74 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 27706.8 |
| 75 | Առջևի արգելակային սկավառակ | 25519.5 |
| 76 | Հետևի արգելակային սկավառակ | 25519.5 |

| Հ/հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ մասերի |
|---|---|---|
| | | 2-րդ մաս |
| | | Տոյոտա LC 150 մակնիշի ա/մ /2 հատ/ |
| | | *Գնացուցակ* |
| 1 | 2 | 3 |
| | **1.SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3645.6 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 3645.6 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 3645.6 |
| 4 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 7 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1093.7 |
| 8 | Օդի զտիչի փոխարինում | 2187.4 |
| 9 | Բենզամղիչի փոխարինում | 10936.9 |
| 10 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10936.9 |
| 11 | Օդորակիչի ֆիլտրերի փոխարինում | 2916.5 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 12 | Ռադիատորի վերանորոգում | 14582.5 |
| 13 | Թերմոստատի փոխարինում | 6562.1 |
| 14 | Ջրի պոմպի փոխարինում | 10936.9 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 15 | Ջրի պոմպի վերանորոգում | 3645.6 | | | | | |
| | | | **4. Կախոց** | | | | | | |
| | | 16 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | 17 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | 18 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | 19 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 20 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 10936.9 | | | | | |
| | | 21 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 5833.0 | | | | | |
| | | 22 | Գնդե հոդակապերի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | 23 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 14582.5 | | | | | |
| | | 24 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | 25 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 26 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | **5. Արգելակային համակարգ** | | | | | | |
| | | 27 | Արգելակային փողրակի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | 28 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 29 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 30 | Հետևի կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | 31 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | 32 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | | **6. Էլեկտրասարքավորում** | | | | | | |
| | | 33 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 18228.2 | | | | | |
| | | 34 | Գեներատորի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | 35 | Գեներատորի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | 36 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | 37 | Մեկնարկիչի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | 38 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 39 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | 40 | Վառոցքի մոմերի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | | **7. Այլ ծառայություններ** | | | | | | |
| | | 41 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ – ի համար | 5833.0 | | | | | |
| | | 42 | Անիվի հանում և տեղադրում | 1093.7 | | | | | |
| | | 43 | Անվադողի վերանորոգում | 1458.3 | | | | | |
| | | 44 | Անիվի վուլկանացում | 1458.3 | | | | | |
| | | 45 | Անիվի բալանսավորում | 1093.7 | | | | | |
| | | 46 | Անիվների դիրքի կարգավորում | 5833.0 | | | | | |
| | | | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | | | | | |
| | | | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | |
| | | 47 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 2551.9 | | | | | |
| | | 48 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 4228.9 | | | | | |
| | | 49 | Յուղի զտիչ | 2551.9 | | | | | |
| | | 50 | Վառոցքի մոմ | 5103.9 | | | | | |
| | | 51 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 61975.8 | | | | | |
| | | 52 | Վառելանյութի զտիչ | 32810.7 | | | | | |
| | | | **2. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | |

| | | |
|---|---|---|
| 53 | Ռադիատոր | 54684.5 |
| 54 | Թերմոստատ | 18228.2 |
| 55 | Ջրի պոմպ | 34998.1 |
| 56 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2187.4 |
| | **3. Կախոց** | |
| 57 | Շարժիչի մեղմիչ | 14582.5 |
| 58 | Հետևի հարվածամեղմիչ | 40102.0 |
| 59 | Հարվածամեղմիչի թասակ | 18228.2 |
| 60 | լծակի վռան | 8749.5 |
| 61 | կայունարարի կանգնակ | 8749.5 |
| 62 | ձախ կամ աջ հոդակապ | 54684.5 |
| 63 | ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 14582.5 |
| 64 | անվակունդի առանցքակալ | 30623.3 |
| 65 | անվակունդ | 40102.0 |
| 66 | Աջ կամ ձախ ձգան | 13124.3 |
| 67 | ղեկային ծայրակալ | 8749.5 |
| 68 | Գնդե հոդակապ | 23332.1 |
| 69 | Առջևի կայունարար | 52497.2 |
| 70 | Առջևի կայունարարի վռան | 3645.6 |
| 71 | Հետևի կայունարարի վռան | 2916.5 |
| | **4. Արգելակային համակարգ** | |
| 72 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 25519.5 |
| 73 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 20415.6 |
| 74 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 27706.8 |
| 75 | Առջևի արգելակային սկավառակ | 25519.5 |
| 76 | Հետևի արգելակային սկավառակ | 25519.5 |

| Հ/հ | SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ մասերի<br>3-րդ մաս<br>Շևրոլե Կապտիվա մակնիշի ա/մ /1 հատ/<br>*Գնացուցակ* |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | **1.SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 3645.6 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 3645.6 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 3645.6 |
| 4 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 5 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| 6 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 3645.6 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 7 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 1093.7 |
| 8 | Օդի զտիչի փոխարինում | 2187.4 |
| 9 | Բենզամղիչի փոխարինում | 10936.9 |
| 10 | Վառելիքի զտիչի փոխարինում | 10936.9 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 11 | Օդորակիչի ֆիլտրերի փոխարինում | 2916.5 | | | | | |
| | | | | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | | | | | |
| | | | 12 | Ռադիատորի վերանորոգում | 14582.5 | | | | | |
| | | | 13 | Թերմոստատի փոխարինում | 6562.1 | | | | | |
| | | | 14 | Ջրի պոմպի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | | 15 | Ջրի պոմպի վերանորոգում | 3645.6 | | | | | |
| | | | | **4. Կախոց** | | | | | | |
| | | | 16 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | | 17 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | | 18 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | | 19 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | 20 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 10936.9 | | | | | |
| | | | 21 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 5833.0 | | | | | |
| | | | 22 | Գնդե հոդակապերի փոխարինում | 10936.9 | | | | | |
| | | | 23 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 14582.5 | | | | | |
| | | | 24 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | | 25 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | | 26 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | | **5. Արգելակային համակարգ** | | | | | | |
| | | | 27 | Արգելակային փողրակի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | | 28 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | | 29 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | | 30 | Հետևի կոճղակների փոխարինում | 3645.6 | | | | | |
| | | | 31 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | | 32 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 4374.8 | | | | | |
| | | | | **6. Էլեկտրասարքավորում** | | | | | | |
| | | | 33 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 18228.2 | | | | | |
| | | | 34 | Գեներատորի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | | 35 | Գեներատորի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | | 36 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 8749.5 | | | | | |
| | | | 37 | Մեկնարկիչի վերանորոգում | 8749.5 | | | | | |
| | | | 38 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | 39 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 5833.0 | | | | | |
| | | | 40 | Վառոցքի մոմերի փոխարինում | 2187.4 | | | | | |
| | | | | **7. Այլ ծառայություններ** | | | | | | |
| | | | 41 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ – ի համար | 5833.0 | | | | | |
| | | | 42 | Անիվի հանում և տեղադրում | 1093.7 | | | | | |
| | | | 43 | Անվադողի վերանորոգում | 1458.3 | | | | | |
| | | | 44 | Անիվի վուլկանացում | 1458.3 | | | | | |
| | | | 45 | Անիվի բալանսավորում | 1093.7 | | | | | |
| | | | 46 | Անիվների դիրքի կարգավորում | 5833.0 | | | | | |
| | | | | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | | | | | |
| | | | | **1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | | | | | |
| | | | 47 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 2551.9 | | | | | |
| | | | 48 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 4228.9 | | | | | |

| | | |
|---|---|---|
| 49 | Յուղի զտիչ | 2551.9 |
| 50 | Վառոցքի մոմ | 5103.9 |
| 51 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 61975.8 |
| 52 | Վառելանյութի զտիչ | 32810.7 |
| | **2. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 53 | Ռադիատոր | 54684.5 |
| 54 | Թերմոստատ | 18228.2 |
| 55 | Ջրի պոմպ | 34998.1 |
| 56 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 2187.4 |
| | **3. Կախոց** | |
| 57 | Շարժիչի մեղմիչ | 14582.5 |
| 58 | Հետևի հարվածամեղմիչ | 40102.0 |
| 59 | Հարվածամեղմիչի թասակ | 18228.2 |
| 60 | լծակի վռան | 8749.5 |
| 61 | կայունարարի կանգնակ | 8749.5 |
| 62 | ձախ կամ աջ հոդակապ | 54684.5 |
| 63 | ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 14582.5 |
| 64 | անվակունդի առանցքակալ | 30623.3 |
| 65 | անվակունդ | 40102.0 |
| 66 | Աջ կամ ձախ ձգան | 13124.3 |
| 67 | ղեկային ծայրակալ | 8749.5 |
| 68 | Գնդե հոդակապ | 23332.1 |
| 69 | Առջևի կայունարար | 52497.2 |
| 70 | Առջևի կայունարարի վռան | 3645.6 |
| 71 | Հետևի կայունարարի վռան | 2916.5 |
| | **4. Արգելակային համակարգ** | |
| 72 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 25519.5 |
| 73 | Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ | 20415.6 |
| 74 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 27706.8 |
| 75 | Առջևի արգելակային սկավառակ | 25519.5 |
| 76 | Հետևի արգելակային սկավառակ | 25519.5 |
| | **Առավելագույն միավոր գների հանրագումար** | **2 888 000** |

**Պարտադիր պայմաններ.**

** Ծառայության մատուցման ժամկետը՝ կողմերի միջև կնքվող պայմանգրի ուժի մեջ մտնելու օրվանից, բայց ոչ ավել քան 2025 թվականի դեկտեմբերի 27-ը:*

*** ծառայության մատուցումը իրականացվելու է՝ պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում:*

**** Ավտոէվակուատորի ծառայությունը կապարվում է տեխնիկական սպասարկում իրականացնող մատակարարի միջոցներով՝ 24 ժամվա կտրվածքով:*

**Կատարողը պետք է ունենա.**

*1. Սպասարկման կետը տեղակայված լինի Մ.Մկրտչյան 5 հասցեից առավելագույնը 3կմ հեռավորության վրա:*

*2.Անհրաժեշտության դեպքում ավտոմեքենայի նորոգումը, անվադողերի փոխարինումը պատվիրատուի պահանջով պետք է իրականացվի պատվիրատուի նշված վայրում Հայաստանի Հանրապետության ցանկացած կետում:*

*3.Անվադողերի նորոգման և հավասարակշռման սպենդ:*

*4.Անվաբացվածքի զուգամիտվածքի կարգավորման սպենդ:*
*5.Մեկ վայրում առնվազն 9 ամբարձիչների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն և ավտոմեքենայի թափքի վերանորոգման հնարավորություն:*
*6.Կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով և ավտոմեքենաների էլեկտրական համակարգի ախտորոշման և թերությունների վերացման համար տեխնիկական ծրագրերով:*
*7. Փոխարինված հին ավտոպահեստամասերը ծառայություն մատուցող ընկերությունը պետք է վերադարձնի պատվիրատուին:*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն | «Սերվիս Ստեյշն» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. Շենք 3 բն.9 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԷՎՈԿԱԲԱՆԿ » ԲԲԸ |
| Հ/Հ 900011018695 | Հ/Հ՝ 1660019711410100 |
| ՀՎՀՀ 02698604 | ՀՎՀՀ 00241595 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն |
| ------------------------Հ.Նասիբյան | ----------------------Է. Մկրտչյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված N 2*
*«23» 10 2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | **50111130/3** | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ այդ թվում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 442 831 | 442 831 | 442 831 | 442 831 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018695
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝

----------------------Հ.Նասիբյան
(ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սերվիս Ստեյշն» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ. Շենք 3
բն.9
«ԷՎՈԿԱԲԱՆԿ » ԲԲԸ
Հ/Հ՝ 1660019711410100
ՀՎՀՀ 00241595
Տնօրեն

----------------------Է. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված 3*
*« 23 » 10 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ________________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ________________________

հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 23 » 10 2025թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| _______________ | _______________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| _______________ | _______________ |
| ստորագրություն | ստորագրություն |

*Հավելված N 4*
*« 23 » 10 2025 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________ _____________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.